ԵՐԿՈՒ ՎԱՎԵՐԱԳԻՐ ՄՈՒՇԻ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
(XIX դ. երկրորդ կես)

Ստորև հրապարակվող վավերագրերից առաջինը Մշո հոգևոր առաջնորդ Մ. Խրիմյանի 1863 թ. դիմումն է ուղղված թուրքական զորահրամանատար Իսմայիլ փաշային, որն այդ թվականին թուրքական զորքերի գլուխ անցած մտավ Տարոն (Մուշ)՝ ճնշելու քրդական հուզումները։ Այդ դիմումի մեջ նկարագրված է Մշո երկրի ժողովրդի (հայ և մահմեդական) հարստահարությունները թուրքական պաշտոնյաների և քուրդ վերնախավի կողմից։ Մյուս վավերագիրը, որը հրապարակվում է աննշան կրճատումներով, հավաստի և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սասունի 1894 թ. հերոսական պայքարի մասին։

Վավերագրերը պահվում են Ե. Չարենցի անվան դրականության և արվեստի թանգարանում (Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, վավ. № 4/V և Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 165)։

ՀԱՅԿԱԶ ՊՈՂՈՍՅԱՆ

1

Բարձրապատիվ Տեր[1].

Ձեր մեծության բարեհաջող և ուրախաբեր գալուստը, որոն մեծ անձկությամբ կսպասեր Մշո երկրի զրկյալ և հարստահարյալ անտերունջ ժողովուրդը, նվաստիս համարձակության կուտա, որ նույն ժողովրդո հոգևոր հովիվն եմ, ներկա աղերսագրություն Ձեր բարձր իշխանության արդյուրասեր առենին մատուցանելով գթության խնդրիցեմ։

Օսմանյան հզոր տերության ընդհանուր կառավարչության տակ չի կա երկիր մի Մշո երկրի պես շահաբեր և արդյունավոր և միանգամայն տերության գանձին ավազան լեցնող առատ աղբյուր մի։ Բայց չկա երկիր մի նորա պես թշվառ խեղճ բոլորովին բարձի թողի եղած այնպես, որպես թե տերության հզոր գավազանին իշխանությունը, Թանզիմաթի[2] բարեկարգությունը հոն մուտ չէ գործեր, գեղացի ժողովրդոց վիճակ նույն է և ավելի վատթար, ինչորս էր 20 տարի առաջ ապստամբ պեյերը կիշխեին մեկ մեկ գավառի մի վրա տիրապետելով. ժողովուրդն ան ատեն իրենց ստրուկ և գերին էր. որչափ ուզեին կճնշեին և կկեղեքեին. չկար փրկիչ մի, որ ազատեր զիրենք։ Փառք Օսմանյան մեծազոր տերության որ յուր իշխանության բազուկներ տարածելով մինչև Հայաստանի (կամ Թուրքիո) խոր գավառները, իբրև պաշտպան և փրկիչ աղատեց ժողովուրդը այդ տիրապետող բռնավորաց ճանկեն. ուստի ժողովուրդն այժմ տերության արդար սեպհականություն և իրավունքն է։ Այո երկիր, ժողովուրդ, օրենք տերությենին, այլ ճշմարիտ խոսելով այսպես չէ։ Եթե բարեհաճի Ձեր մեծությունը անգամ մի այցելություն ընելով Մշո երկրի արդի վիճակը քննել, բնավ այդպես չի պիտի տեսնա. հոն այո՛ միմիայն տերության մեծ անունը որ պատկառանոք կհիշվի. բայց իշխողները և տիրապետողներն ուրիշ են, որք կամ բռնությամբ կամ քաղաքականության տակ ծածկված գաղտնի եղանակներով անմիջապես կիշխեն ժողովուրդո վրա և այս անիրավության մեջ անչափ անհոդ և աներկյուղ են՝ գիտես թէ իրենց վրա նկատող աչք մի չկա. ո՛չ տերության ա՛չք, ոչ օրինաց աչք և ոչ ևս հավատարիմ պաշտոնեից հսկողության աչքը։ Ով են այս հին բռնավորաց մնացորդ զավակները, որոնք թանզիմաթի հաստատվելեն մինչև ցայսօր Հատտի Հումայունի[3] տերության բարձրաշունչ հրովարտակին արտոնության ձայները դեռ լսել չեն ուզեր կարծելով, որ տերության հրամանին և օրինաց

անարգության վրեժխնդիր իշխանություն մի չի կա. Հատտի Հումայունի արդարության պայմանները պարտք կդնեն մեր տերության ընդհանուր հպատակաց վրա՝ թե իսլամ ժողովրդոց և թե քրիստոնյա ազգաց, որ տերության մեծ գերդաստանին մեջ իբրև միո հոր նույն անձին զավակները սիրո սերտ կապակցությամբ եղբայրաբար և ընտանեբար միացվին իրարու հետ առանց բնավ զիրար զրկելու և նախատելո, իսլամ յուր մզկիթին մեջ իսլամ ճանաչվի, քրիստոնյան իր երկնեցիին մեջ՝ քրիստոնյա, իսկ այս աղոթարաններեն դուրս իսլամ և քրիստոնյան առհասարակ հպատակությամբ օրինաց առջևը իբրև հավասար եղբայր և ժառանգորդ տերության երկրին և տան մեջ։

Բարձրապատիվ տեր, կաղաչեմ Ձեր իշխանության գորովատես հայեցվածք ուշադրությամբ դարձնես այս կարևոր կետին վրա։ Ես ուրիշ գավառներու համար երաշխավոր չեմ թերևս անոնց մեջ Հատտի Հումայունի ազդեցությունը հավատարիմ գավառապետաց ձեռքով մեծապես կտիրե և անոր պատվերներ ի գործ կդրվին, բայց Մշո նահանգին մեջ այդպես չէ. մեր բարեգութ օգոստոսափառին գահեն ծագած Հատտի Հումայունի հավասարության արևը դեռ այս դժբախտ աշխարհին վրա նշույլ մի անգամ ծագած չկա, ուր ամեն բան խավարին մեջ կգործվի, տեղական կառավարությունը տերության պատին շուքը և յուր վրա դրած պարտուց հարկը գոգթե առ ոչինչ համարելով անկասկած է ինքն. ուզե կտեսնա յուր աչքին առաջ գործված ոճիրները, չուզե չի տեսնար։ Թող այս. շատ անգամ ևս անհնարին ոճիրք, դողություն, զրկանք կամ այլ և այլ հարստահարությունք նույնիսկ տեղական ատյաններուն մեջ հայտնի և անուղղակի պաշտպանությամբ կսրբվին. այս տեղը ո՞վ չի տարակուսիր թե գավառապետն և յուր ատյանը մեղապարտ են տեղական և տերության օրենքին առաջը, որ առանց ակնառմամբ պատիժ կստանա, որ դատաստանական ատենի մը համար սահմանված արդար և սուրբ օրենքները՝ անիրավ կաշառակերությամբ կպղծեն. այս հանցանք մեծ է, ո՞չ իսլամին ղուրան և ոչ իսկ քրիստոնեից ավետարան կարող են քավել։ Վերը խոսեցա թե Մշո երկրի գործված ոճիրները տեղական կառավարության աչքին չեն խուսափիր, եթե տեսնալ ուզե։ Տարի մի առաջ նույն իսկ Մշո մեջ եկեղեցի մը կկողոպտվի, որն որ հազիվ թե թիզ մի հեռու է տեղական իշխանութենեն, չեմ հիշեր հոս գյուղերու մեջ պատահած քանի քանի եկեղեցիներուն կողոպտվիլը. չեմ հիշեր Սլիկան գյուղի սրբապղծության դեպքը, որուն հավասար բնավ անարգանք մի չի կա քրիստոնեական կրոնին դեմը. չեմ հիշեր քրիստոնյա ընտանեաց հափշտակություն, զորս աստված իբրև նվիրական և անկորուստ ավանդ հանձներ է մեր ինքնակալ կայսեր ձեռք, չեմ հիշեր դեռ երկու ամիս է Մուշեն երկու ժամ հեռու սբ. Հովհաննես վանից խսպառ կողոպտվելուն դեպքը, որուն այնչափ հարստությանց հետ ավարի տարան մեր պաշտելի նվիրական խաչեր՝ հանդերձ հազվադյուտ մասունքներով, որուն արժեքը քրիստոնեական կրոնին առաջ մեծ է, և աշխարհին գանձը կարող չէ գնահատել զայն։ Մեծ զարմանք է, ով մեծ իշխան, այսքան ոճիրներ կգործվին Մշո աշխարհին մեջ, ինչպես այդ հավատարիմ և չարքաշ ժողովուրդը, որուն շունչ բերան հասած դեռ կհամբերե, միմիայն ակնկալության հույս մի ունի և կսպասե թէ օր մի մեր բարեխնամ տերությունը յուր ազդեցությամբ ձեռք կարկառելով կփրկե զիրենք։ Դուք եք ահա այն ձեռք, ո՞ ողորմած տեր, ձեր աչք և խնամք քաղցրությամբ դարձուցեք այն աշխարհին վրա, որուն աղետներուն կշիռը ամեն գավառներուն վրա ծանր և անտանելի է։ Տե՛ր, Մշո երկրի տագնապ խիստ մոտալուտ է. առ տերություն ունեցածս հավատարմության պարտք և նույնիսկ պաշտածս կրոնին ճշմարտություն կհարկադրե զիս, որ գրեմ և հայտնեմ ինչ որ տերության շահն է, ա՛յո եթե ձեր այցելության ձեռք չփութա իշխանական զորությամբ արգելել և ղսպել այն ամեն հարստահարող և քանդող ձեռքերը, ստույգ խոսելով գարուն գալուն պես Մշո աշխարհ պիտի քանդվի։ Երկրի մի շենություն և հաստատություն ժողովուրդն է, տերության վաստակ հարստություն և փառք ժողովուրդն է, մանավանդ այն գեղաբնակ երկրագործ աշխատասեր և հավատա-

բիմ ժողովուրդ։ Ահա այսպիսի ժողովուրդ մի թող պիտի տա Մուշ։ Թող պիտի տա իր մայրենի տուն դաշտ, կալված և ագարակ միայն յուր խեղճ ընտանյաց ձեռք բռնելով պիտի դիմե օտար աշխարհ, հուսալով թե կարող է գտնել դյուր ապաստանություն մի։ Ճնշյալ և անճարակ ժողովրդի վերջին հիզ և հույս փախչելն է միայն, ո՞վ կարող է մեղադրել զիրենք։ Այո՛ խիստ դժվարին է Մշո նման արգավանդ և հացալից երկիր մի թողուլ, բայց դինքն պաշարող վերահաս վտանգ և բուռն հարստահարության տագնապը այնչափ ջլատել և ուժաթափ է ըրել նորա կյանք, որուն դեմը այլևս չկարե տակալ կամ գուժել։ Հաճեցեք ո՛վ տեր հարցանել մեր նվաստութենեն թե ինչ են և բանիպատիկ այդ հարստահարության ճյուղերը, որոնք ժողովուրդը այդ վիճակին հասուցեր են. հարստահարության ներքին և արտաքին պատճառները բազմապատիկ են, զանոնք նկատելու համար դիր և լուր բավական չեն, այցելություն և աչք պետք է, բայց գլխավոր բուն հարստահարության պատճառները քանի մի հոդվածներով Ձեր մեծության բացատրելու պատրաստ եմ։

Առաջին հարստահարության պատճառները Մշո ընդարձակ երկրի շրջապատյալ Հասնանցի, Ճիպրանցի և այլ քանի մի ազգ-քյուրտերն են, որոնց միջեն Թոռուն ըսվածները որոնք քսան կամ երեսուն տունի չափ են. Տեր, եթե հավատաք պիտի խոսիմ. Մշո երկրի ընդհանուր գեղացի բնակիչներու վրա տիրապետող կառավարություն անոնք են։ Նախորդ կուսակալները հիշյալ թոռուններին ձերբակալ ընելով մինչև Կարին բերել տվին և Թաշխանի մեջ շղթայակապ բանտարկեցին։ Բայց այդ լեռնացի քյուրթերը որչափ վարպետ են այս կերպ գործերուն մեջ, քաջ գիտեն զորավոր գործիքներով իրենց շղթաները քակել, այս գործիքներուն անունը ինքնին հայտնի է, անուն տալ հարկ չէ։ Դիտես թե այդ քյուրթերը կաշառատուր մարդկանց նկատմամբ շարժական կալված մի են, այդ խելացի քյուրթերը Թաշխանեն ազատվելով՝ ի՞նչ կնեն, այս մասին խրատ պետք չէ իրենց, ամենայն իշխանությամբ կգտնան Մշո երկիրը, որչափ տուժեր են, անոր կրկնապատիկ գիտեն ժողովիլ։ Ինչո՞ւ չէ, իրենց ճորտեր կհամարվին, ո՛չ միայն գեղացի հայ ժողովուրդն, այլ նույնիսկ իրենց համարյուն ազգը, որոնք ցած ստրկությամբ միշտ իբրև գերի և արծաթագին ծառայեն թոռուններուն ձեռք։ Այս թոռուններուն երեսեն ժողովրդոց քաշած զրկանքները կարող չեմ մի առ մի գրել, բռնություն, գողություն, հափշտակություն և բազմաթիվ ոճրագործություններ իրենց սովորական հին արվեստն է, քանի որ իրենց կյանք թափառական է և իրենց սահման լեռներուն ազատ վայրերն են, վրան մի և ձի մի բավական է իրենց։ Ասոնք կկարծեն, որ շարունակ պիտի կենան այս վայրենական դրությամբ տերության հողին մեջ, իբրև հպատակ կձևանան, բայց ամեն բան կայսերական իշխանության և օրինաց դեմ գործելով՝ տերության մեծամեծ շահեր կփչացնեն։ Մի՞թե այնքան ապուշ և հիմար են ասոնք. քավ լիցի, որ չի կարողանան մտածել, որ տերությունը իր հաշիվներու անբավ կորուստներ ինտրելով, պիտի հանե զիրենք այդ հին վայրենի դրությենեն և տեգին տեղ մաճ տալով՝ կրթել տա զիրենք շինական աշխատության մեջ։ Մեծ սխալ է կարծել, թե դոքա պատերազմի ժամանակ մեծ պիտանություն ունեն տերության թշնամյաց դեմը։ Այս փորձը Արևելյան պատերազմի ատենը հայտնի տեսնվեցավ. Կարսի, Պայազիտի բանակներու մեջ քսան հազարեն ավելի հեծելազոր քյուրթեր կային, ի՞նչ նշանավոր քաջություն գործեցին. իրենց սրտին մեջ տերության և հայրենյաց համար կռվելու անձնվիրության նպատակ մի չի կար, իրենց նպատակը միայն բանակին կողոպուտն էր, սոսկ թնդանոթներու ձայն բավական եղավ զիրենք ահաբեկ ընել։ Խուճապելով իրար անցան, թող տվին թշնամյաց կրակին առաջ տերության կանոնավոր զորաց բանակը, իրենք դեպի փախուստ դարձան։ Մշո այն բարգավաճ աշխարհին հողագործության վաստակը այս քյուրթերուն երեսեն հարյուրեն մեկ չէ մնացած. շեն շեն գյուղերը ավեր դարձան, արգավանդ դաշտերը ամայի մնացին. այս ցավալի ամայության վնասը հաշվել պետք է, եթե ո՞րչափ հասավ և որչափ տակավին պիտի հասնի տերության գանձուն։

Երկրորդ. *Մշո ընդարձակ դաշտին ավերիչները դարձյալ կեռչար ըսված քյուրթերն են, որք Տիգրանակերտի դաշտեն մայիս ամսվան մեջ մարախի նման կթափին Մշո լեռները և ամեն ատենը անդադար գիշեր և ցորեկ խմբովին իջնալով ի դաշտ, ինչ որ ձեռն հասին կնեն զայն թե հայտնի և թե գողությամբ, Մշո կառավարություն կտեսնա այս կեռչերներու ձեռքեն ժողովրդոց քաշած վիշտերը, բայց կպատճառե, թե կարող չեմ զսպել. սուտ է, այդ կեռչերները Թաշխանի քյուրթերում պես վարպետ եղած, հարկ եղած ատենը գիտեն Մշո կառավարության աչքը կապել, որ զիրենք չի տեսնա, և ասով ամեն կնրպ հարստահարությունները անկասկած ազատաբար գործեն։ Բնավ հույս չիկա, թե կբարվոքի դաշտեցի գեղացվոց վիճակը մինչև այդ կեռչար ըսված քյուրթերում առաջը չառնվի։ Այս միջոցը դյուրին է, գիտե իսկ Ձեր մեծությունը ըստ պատշաճին ի գործ դնել Բարձրագույն Դռան զորությամբ և Տիգրանակերտի կուսակալին ձեռքը։*

Երրորդ. *Հարստահարության մեկ գլխավոր պատճառն ևս տերության տասանորդին վարձակալներն են, որոնք սահմանված օրենքին համեմատ չեն վարվիր, այլ իրենց իրավունքեն դուրս պահանջմունքներ կընեն, որոնցմե միայն մեկ իրավունքը հիշեմ բավ է։*

Վարձակալին իրավունքն այն է, որ հողագործին ցանած բերքերեն ինչ սերմ որ կլինի յուրաքանչյուր տեսակեն իր տասանորդը ստանա բերքերը չափած ատենը՝ թե հացեղեն և թե խոտ. բայց Մշո երկրի համար այսպես չէ. տասանորդող վարձակալը խոտ կհամրե իր բաժին տասանորդ չի վերցներ, այլ թող կուտա տիրոջ վրա մինչև ձմռան սկիզբն կամ մեջը, երբ խոտին գին կրկնապատիկ կառաջնա, հետո կուգա խոտին տիրոջը սուսկ դրամ կպահանջե, խեղճ գեղացին այս զրկանաց համար որու՞ պիտի բողոքե, մանավանդ երբ տասանորդողն Մշո կառավարության անդամներեն մեկն է։ Թող այս, եթե պատահի կարոտ գեղացին քանի մի ածու բանջարեղեն ցանե, անշուշտ կպարտավորվի քառասուն կամ հիսուն ղուրուշ տասանորդ տալ կամ ավելի շիտակ խոսելով տուժել. անճարակ գեղացին կստրջանա յուր աշխատության վրա և հազար անգամ կաղաչե տասանորդողին, որպեսզի այդ քանի ածուներում ամբողջ բերքը առնե յուր տասանորդին տեղը և ինքն ազատի այս անիրավ տուժեն. միթե կարելի՞ է բերքին տեղ դրամ ստանալ, քանի որ ամբողջ ածուներում բերքը 30 ղուրուշ անգամ արժեք չունին։ Պետք չէ մոռանալ նաև այդ վարձակալներում ծառայից հասուցած զրկանքները, որք հնձոց և կալի ժամանակները գեղերու մեջ նստելով, ո՞րչափ կծանրանան խեղճ գեղացվոց վրա իրենք իրենց ձիերով մեկտեղ։ Ոչխարաց տուրք ժողվող վարձակալաց վարմունքը, Մշո կառավարության դռնեն այլև այլ գործոց համար գեղեր գնացող ծառայից վարմունքը, ասոնք առհասարակ սահմանված օրենքին դեմ հակառակ վարվելով՝ ձիոց և իրենց կերակուրներն պետք է որ ձրի լինեին։ Թող այս դատապարտ բեռըն՝ հայհոյանք զրկանք և լլկանք ևս վերա բարդելով։

Չորրորդ. *Հարստահարության բավական մեծ պատճառ մի ևս Մշո երկրին գնացող գաղթականներում մնացած տուրքն է. 40 այնպիսի գեղեր կան, որոնք հառաջ 50 կամ 100 տուն եղած են այժմ հիսունեն երեսունը իջած է և հարյուրեն վաթսուն, ամբողջ գեղին տուրքը խեղճերեն կպահանջեն, ասով ամեն մեկ գեղերում տուրքերը բազմապատկվեր են։ Խայրետին փաշայի օրեն մինչև ցարդ քանի քանի անգամ գյուղացվոց կողմեն բողոք տրվեցավ, թե Բարձրագույն Դռնեն և թե Կարնո կուսակալաց կողմեն ազդու հրամանագիրները ղրկվեցան ի Մուշ, բայց մինչև ցարդ նորա գործադրությանը համար անփույթ եղած է Մշո կառավարությունը, դեռ այդ ողորմելի գեղացիները գնացող գաղթականաց ծանր բեռանց տակ կճնշվին, մինչդեռ իրենք իրենց չքավորութենեն իրենց բաժին տուրքը կարող չեն վճարել։ Ինչպես կարելի է և ինչ իրավունք է ուրիշի բաժին ինկած տուրքն ևս վճարել։*

Տեր, շնորհ ըրեք և գթացեք. հարստահարությանց այս մասն ևս կարգի դնելու, միայն ձեր արդարությանը կսպասե, վասնզի Մշո երկրի շատ գեղերը

այս մեծ անիրավության երեսեն հետզհետե կքանդվին և գաղթականություն կշատանա օր ըստ օրե, ահագին վնաս մի ևս այս է ահա՛ տերության գանձուն։

Հինգերորդ. հարստահարության ամենամեծ և գլխավոր պատճառն, ճշմարիտ և բացարձակ խոսելով, Մշո կառավարությունն է, որո առաջը տերության օրինաց գիրքը քակված է, հոգ չէ, նշանակություն մը չունի, իրենք այսօր այսպես կկառավարվին, ինչպես քսան տարի առաջ ապստամբ տիրապետողները. այնչափ ապահով են իրենց ապօրինավոր ընթացից վերա, որ առանց ակնածության և անարգել կգործեն ինչ որ ուզեն։ Գիտես թե բացարձակ տեր են երկրի մի և զիրենք պատասխանատու չեն ճանաչեր Բարձրագույն Դռան և Կարնո մեծ կառավարության առաջ, թե օր մի երբ իրենց անիրավության չափ լեցվի և զրկյալներուն աղաղակ առ աստված հասնի, անշուշտ հզոր դատավոր մի պիտի հասնի իրենց վերա և ավագ աչքով նկատելով՝ ըստ այնմ պատուհասե զիրենք։

Այդ հզոր դատավոր, այդ ավագ աչք դուք եք, ո՛վ հրամանատար իշխան, ամեն գավառներեն առաջը ձեր խնամք ձեր գութ և ձեր աչք 'ի Մուշ դարձուցեք, թող մի տայք, որ այսչափ հարստահարությունից երեսեն քանդվի տերության բարգավաճ աշխարհ մի, որուն արքունական տուրք հարյուր բեռան չափ է։

Ի՛ վերջո ներկա աղերսագիրս մատուցանելով Ձեր բարձր վսեմափայլությանը, խոնարհաբար կաղաչեմ Մշո երկրի հարստահարության բարձվելուն և ընդհանուր խաղաղություն տիրելու մասին ինչ միջոց որ պատշաճ է, Ձեր վեհ իշխանությունը և իմաստությունը քաջ գիտե կշռադատել զայն, թե համարձակություն տաք այս միայն կհիշեցնեմ Ձեր մեծության. Մշո երկրի մեջ հիմնական բարեկարգություն հաստատելու համար անշուշտ արմատեն կամ նույնիսկ գլխեն սկսելու է, և այս գլուխ և արմատը նույնիսկ Մշո կառավարությունն է յուր ամեն հանգամանոք։

Ահավասիկ, տեր իմ, ինչ որ իմ հավատարիմ հպատակությանս պարտքն էր՝ սրտի մտոք կատարեցի, բնավ թող չկասկածի Ձեր բարձր և խորին ուշադրությունը, թե մեք կուսակցական ոգով միայն Մշո աշխարհին մեջ գտնված քրիստոնյա ժողովրդոց ցավալի վիճակը նկարագրեցինք, ոչ այլ առանց կրոնի և ազգի նկատման՝ իբր մարդ և մարդկային կարեկցությամբ նույն աչքով նկատեցինք նաև իսլամ ժողովրդոց խեղճ և աղքատ վիճակը, որոնցմե շատերը ավուր պարենից անգամ կարոտ ըլլալով՝ կտառապին չարաչար։

Միթե Մշո կառավարության ազգասիրության պարտք չէ՞ր գեթ համազգակից ժողովրդոց վիճակը բարվոքել։ Ստույգ և համարձակ խոսելով նույնիսկ ղուրանի որդիքը ավետարանի որդոց հետ առհասարակ կճնշվին և կհարստահարվին շատ անգամ։ Մի՞թե կառավարության առաջ նրանց բողոք և աղաղակ լսվա՞ծ է, ո՛չ բնավ։

Ի՛ վերջո, ո՛վ առատագութ իշխան, Մշո ընդհանուր բնակչաց կողմեն, ճնշված և խեղդված ժողովրդոց բերնեն իբրև թարգման մի նոցա հեծեծությունը և վիշտը իբրև պատկեր նկարելով ձեր արդարության տեսարանին՝ առաջ կհանեմ որուն վրա ձեր քաղցր ակնարկությունը հրավիրելով կմնամ մեր մեծ օգոստոսափառ կայսեր հավատարիմ հպատակ և ձեր մեծության կենաց աղոթարար Խրիմյան։

2

Սասնո դեպքերը

Կովի նախապատճառները

1. Մի քանի տարիներե ի վեր Տալվորիկ և նորա օրինակին հետևելով այս տարի ևս Գելեգյուզան, Իշխնձոր, Աղբեն, Հեթիեմ, Շենբ, Սեմալ բազմահայոց գյուղերը կմերժեն բացարձակորեն կառավարության տուրք և շրջակա քուրդ ցեղապետներուն խաֆիրության[1] 2 տարեկան կտրված հարկը

վճարել։ Սոցա կաշխատին հեռևիլ Շատախու, Բերմի, Խուլփ և Խեյան ու Փսանաց գավառի հայ բնակիչները և այս նպատակավ կանպատվեն ու կհալածեն ամեն տեղ հարկահան ոստիկանները։ Փսուրի տեղապահ կառավարիչը (կայմակամ) 37 ոստիկաններով ու քուրդ հեծյալներով մի առ մի կձերբակալե բոլոր Խուլփ և Խեյանա հայ մեծամեծները, կուգա Իշխնձոր, կբռնե չորս-հինգ հոգի և կպահանջե Տալվորիկեն Գասպար, Խաչո, Փուռի գյուղի նորընծան Գելիեգուզանեն Կեռո (Պետոյի տղեն) ու Շենըքեն ռես Գրգոն։ Սասունցիք ո՛չ թե միայն կմերժեն հիշյալ անձինքն հանձնել, այլև Իշխնձորի մեջ հարձակելով Գայմագամի վրա՝ կսպանեն ոստիկաններն և 12 քուրդեր, մյուսները մազապուրծ կփախնին։

2. Մի քանի տարիներե ի վեր սասունցոց քուրդ աշիրեթները (ցեղ) ընդդեմ ցույց տված թշնամական վարմունքը, հաճախակի կռիվները և երկուստեք տեղի ունեցած ավարառությունները տարեկան տրոց (խաֆիրության) մերժումը, նամանավանդ Տալվորիկի անցյալ տարվա պատերազմը, ուր հարյուրավոր քուրդեր ընկան, շրջակա ցեղերը վերին աստիճանի կատղեցուցած էին և ի վրեժ գրգռած։

3. Բաղեշո կուսակալության տրված զեկուցումներեն կառավարությունը տեղեկացել էր՝ թե օտարական զանազան անձնավորություններ կպահվին Սասնո մեջ, որոնք կաշխատին ժողովուրդը գրգռել ընդդեմ կառավարության և արտասահմանեն զենքեր կտեղափոխեն այնտեղ, և թե կազմված [է] հայ հրոսակային խումբ մի, որ մշտական հարձակումներով սարսափ կազդե շրջակա քուրդերու վրա։

Կռվի ընթացքը. Բաղեշի կուսակալանիստ ժողովում, ուր ներկա էին Բադրանցոց, Ռըշկոտանցոց, Խարըկանոց. Փենճարի, Խոզասարի վրա բնակող Խարզանցոց, Բըշըրիկի մեծ աղերապետը, Բելիկցոց բեգերը, Խոյթի և Ցանալինի բոլոր մեծամեծները, մոտրնկացի, խիզանցի գլխավորները։ Բադկանցոց, Խոզըկանցոց, Խիկանցոց, Իվյանցոց և Սլևանկի բոլոր ցեղապետները և Հյուսիսային քուրդերի համիտյեյի հեծելագնդի Բեյիետոին փաշան այն որոշ եզրակացության հանգեցան, որ Սասուն իր անառիկ դիրքով, անմատչելի սարերով և ժողովրդով միշտ գլխավոր վտանգ մե Օսմանյան կառավարության, որոնց ըմբոստ օրինակին կրնան հետևիլ դրացի գավառացիք։ Ուրեմն հարկ անհրաժեշտ է որ ապստամբությունը խեղդվի դեռ յուր օրորանին մեջ, քանի դեռ նոքա բոլորովին անպատրաստ դրության մեջ կգտնվին։ Եվ հրաման տրվեցավ բոլոր քուրդ ցեղերուն, որ անհապաղ գումարվին և չորս կողմեն հարձակվին Սասնո վրա։ Աներևակայելի արագությամբ բոլոր շրջակա կուսակալության զորքերը դիմեցին ի Մուշ, ուստի միայն 7849 հետևակներ, 2000-ի չափ հեծյալներ և 150 թնդանոթաձիգներ ուղևորվեցան ի Սասուն։ Ռուսական և Պարսկական սահմանագլխեն սկսյալ բոլոր ցեղերը գունդագունդ դիմեցին այնտեղ։ Միայն Բայազետի Հայդարանցիք 3000 հեծյալներով, որով կարելի է գաղափար կազմել այն ահեղ բազմության վրա, որ մեկ ակնթարթի մեջ պաշարեցին Սասնո գավառը։ Տեղացիք տեսան այդ փոթորկաբեր ամպերը, որ կկուտակվեին իրենց ազատ սարերու վրա, չորս կողմեն դիմող լրաբերները սարսափելի տեղեկություններ կհասցնեին։ Նրանք անգիտակից չէին թշնամու բազմության, սակայն ուրախ սրտով կսպասեին այդ «մեծ որսին», ինչպես իրանք կանվանեին, դեռ արտերը չհնձած մեկ օրվա պաշար իսկ չունենալով, առանց վառոդի ու գնդակի, բոբիկ ոտներով մեկ շապիկ հագին, ապավինելով իրանց անառիկ սարերուն, իրանց քաջ զավակներուն, որոտացող շեշխաններուն[2] ու էրկսայրի նաշաններուն[3]:

Այստեղ գումարված քուրդերու թիվն է մոտավորապես 43.000, Օսմանյան կառավարությունից զենք և ռազմամթերք ստացան, իրանց ցեղապետներու և շեյխերու (Շեյխ Ջիլանի) առաջնորդությամբ, իսկ Թուրք բանակին միացած էր քուրդերուն 12. 300 զինվորներ։ Հայոց կռվողներու թիվը անհայտ է, որովհետև կանայք և մանուկներ ալ կըկռվեին, որոնք զենք կարենային ճարել։ 304 հրացանավորներ Տալվորիկեն՝ յուր գյուղերովը —740. Գելիգու-

դանեն—208, Շենիքեն—160, Սեմալեն —180, Իշխանձորեն, Հնթինքեն— 34. Աղիբենեն— 120, Ալիանցոց գյուղեն— 208։

Հուլիս 27. բաղդկանցիք նախահարձակ լինելով՝ կթալանեն Շենքբի ոչխարները. հայերը հետապնդելով կխլեն իրենց ավարը, կայրեն Կուրդ ամառանոցի բոլոր քուրդ վրանները և ահագին քանակությամբ տավար և ոչխար կբերեն երկար և արյունահեղ կռվից հետո, երկու հայ և 34 քուրդ սպանվածներ։

2. օգոստոս. Շենքբ և Սեմալ, ենթակա առաջին հարձակման, կբռնեն դեպի անառիկ Գիլի։ Քուրդերը ահեղ բազմությամբ կհարձակվին, կայրեն Շենքբ (106 տուն) և Սեմալ (85) և կհարձակվին փախստականներու վրա. կռիվը կտևե 7 ժամ, մինչև օգնության կհասնին Անդոքեն հրոսակները և 400 դելիցիներ։ Քուրդերը ահագին կոտորածով կփախչին օսմանյան վրաններուն տակ, թողնելով դաշտի վրա 354 դիակներ... Հայոց կողմից կընկնին 17 շենքբցի, 8 սեմալցի, 6 դելիցի և 8 կանայք։

3. օգոստ. ըստ տաճկական երեկոյան ժամը 9-ին հնչեցին պատերազմական փողեր. հարձակում միևնույն ժամանակ Տալվորիկի, Իշխանձորի, Աղբենի, Անդոքի վրա։ Հավատորիկ գագաթեն ռումբեր կտեղան կռվին անմասն Շատախու գյուղերու վրա։ Սասնո լեռներ միգապատ ամպերով ծածկված են, կարծես հրաբխային լավաներ կհոսին, ամեն կողմ արյան դետեր, կարկտահար դիակներ. կեսգիշերին կգրավեն Ալիանցոց գյուղը և կայրեն (165 տուն), գելցի Պետոյի տունը կայրվի. Կեռ միայնակ 27 հոգի սպանելեն հետո, երբ այլևս վառոդ չի ունենալ, սուսերամերկ կհարձակվի և կըսպանվի 13 վերբեր ստանալուց հետո։ Գելիցիք կհաջողին ետ մղել թշնամին, որ 26 ժամ անընդհատ կռվելեն հետո կթողա անհամար դիակներ ամեն կողմ. միայն 'ի Գելի, Ալյան, Անդոկ 760 զինվորներ կսպանվին։ Հայոց կորուստը՝ 23 գելիցի, 15 ալիանցի, 14 շենքբցի, աղմալցի, 7 իշխանձորցի, 6 աղբենցի, 17 կանայք և 9 մատաղերամ մանուկներ։

4. 5. 6. օգոստոս. մշտական հարձակումներ երկուստեք. միշտ հայերը հաղթանակավ, անթիվ քուրդ սպանվածներ. հայերու կողմեն՝ միայն 5 մարդ 3 կին։

7. օգոստոս. ուրբաթ լինելով զինադուլ օսմանցոց կողմեն, հայերը՝ գելցիք, իշխանձորցիք, ալիանցիք, շենքբցիք, սեմալցիք, կրգումարվին Անդոկ, խսկ տալվորիկցիք իրանց շրջակայով ի Ֆրոֆրոբար, Անդոկ գյուղեն 3/4 ժամ արևմուտք, առանձին գագաթ մը հարավեն Սռապահ սարին հետ՝ հարմար պաշտպանվելու, ընդարձակ արոտներ, լեռան գագաթեն պառեկները ստորոտը, հացի և աղի բացարձակ չգոյություն. այստեղ հավաքված 21.745 խառնիճաղանճ բազմություն՝ ծեր թե մանուկ, այր թե կին իրենց քաջերովը, իրանց ուտեստը մածուն, բանջար և անլի միս. անպատմելի նեղություն և անտանելի ցուրտ։

8 օգոստ. ահեղ հարձակում, ռումբերու որոտներեն կթնդան սար ու ձոր. Շատախի բոլոր գյուղերի հասունացած արտերը և խոտի դեզերը կայրվեն քուրդ և օսմանցի հեծյալներու ձեռքով։ Աննկարագրելի է կատաղած մահմեդականներու բարբարոսությունը թշվառ, անպաշտպան ժողովրդյան վրա։ Հուսահատության աղաղակները, գոռումն ու ժխորը ահեղ մարտի մեջեն կհասնին անդունդ և կատաղի զայրույթով կլցնեն բոլորի սրտերը։ Գեղաշեն կայրի ռումբերու հարվածներու տակ, սոսկալի կոտորած 'ի Սպղանք (Տալվորիկ), ուր հայ մը պաշտպանվիլ ուզելով քուրդ ցեղապետի մը մոլեգին հարձակումներեն՝ կսպանվի հարազատ եղբոր ձեռամբ. անթվելի կորուստներ. օգոստոսի երեքեն շատ ավելի անթիվ զորքաց դիակներ, քուրդերու փախուստը, օսմանցիք մյուս կողմեն թնդանոթներով ի մարտ կմղեն, անլուս շփոթ և իրարանցում, կռիվը կտևե անընդհատ երեսուն ինը ժամ։

9. 10. 11. 12 օգոստոս. մշտական հարձակում, անթիվ սպանություններ, հայերու վառոդը կսպառվի, կվերջանա, մի քիչ Տալվորիկեն կուղարկվի, անտանելի սով։

13 օգոստոս. անընդհատ ահեղ կռիվ կտևի 27 ժամ, հարձակում միաժամանակ ամբողջ օսմանցոց չորս կողմեն։ Կենտրոն կրկին Գելի և Սասունը։ Ամայի Գելի խիստ նեղ կացության մեջ։ Անդոքեն կհասնին օգնության. անհրեվակայելի քաջությամբ և տոկունությամբ հայոց կողմանե նշանավոր հանդիսացած շենքքցի Գրգոն՝ հրոսակներու անդամ։ 18 տարեկան Գևորգ և Կրպոն կպատմեն, թե գոռ կռվի ժամանակ, երբ թշնամին սկսավ փախուստ տալ, պատանի դյուցազն Ադամ կանգնած մի քարաժայռի վրա՝ ճոճելով բերդանքեն[5] կաղաղակե, ասելով՝ «շնե՜ր, վատե՜ր, փախեք ասեք ձեր մեծին, որ գա աստեղ յուր սև ղինվորներոք, սասունցիք բոլորի համար ունին տաք գնդակներ։ Անմիտնե՜ր, ինչու պարապ տեղ կթափինք իրար արյուն, օրը տաքցեր է և սասունցու ժամանակ հասեր. թողեք այս երկիրը, փախեք Արապստան, փախե՜ք, ձեզանից ոչ արու կթողունք ոչ էգ»։ Կքանդվի Գելի (360 տուն), կկողոպտվի եկեղեցին (կհաստատեն քրդեր, թե արծաթազգեաց հեծյալ մի, նիզակ ի ձեռին, ահեղ մարտնչող, անհայտացավ եկեղեցվուն մեջ)։ Անհնարին էր երկուստեք կորուստը. միայն ի Գելի և Անդոք՝ 675 քուրդ, 236 հայ մեծ մասամբ գելիցիք և մի քանի հրոսակներ. իսպառ կհատնի հայերու ռազմամթերքը, կռվի դաշտին տեր դարձյալ հայերը։

14 օգոստոս. քուրդերը բացարձակ կմերժեն երկարել կռիվը և կսպառնան օսմանյան զորաց։ Փաշան պատվիրակներ կուղարկե Անդոք սուլթանին կողմեն ամենքին ներողություն շնորհել, եղած վնասները պետական գանձեն դարմանել և Սասուն հարկեն ազատ պահել կացուցանել խոստանալով։ Մուրադ կկանչվի Տալվորիկեն. կհառաջարկե խաղաղություն, հայտնելով, թե առանց հացի պաշարի և ռազմամթերքի անկարող են երկար դիմադրել։ Գրգոն կռիվ կպահանջե, հայտարարելով, թե «օսմանցին չի կարող մոռնալ յուր կորուստներ, վաղ թե անագան պիտի աշխատի պատժել մեզ, այն բոպեին, երբ մենք անպատրաստ կլինենք. լավ է, որ այսօր խառնենք զմեր արյուն մեր հղբայրներուն հետը, և գլուխ չծռենք անգութ օտարին։ Շնորհակալ ենք այն բարերարութենեն, որ սուլթան ցույց կուտա մեզ, փոխարինել ուզելով անձնական գանձեն մեր կորուստներ. հեռացե՜ք մեր երկրեն և խաղաղություն ինքն իրեն տեղի կունենա»։

15 օգոստոս. փաշան հաջորդ օրը 500 հեծյալներով կուգա Անդոքի ստորորտը և կպահանջե, որ մի քանի անձիք գան բանագնացության։ Ռազմամթերքի, հացի բացարձակ չգոյությունը կստիպե գոռոզ սասունցուն զիջանել բանագնացության։ Կընտրվի 184 հրացանաձիգներ և կիջնեն դաշտ։ Խոսակցության պահուն Գրգոն, որ կդիտե Անդոքի սարեն այս ամենը, կտեսնե զարմացմամբ, որ պարակներու միջից գունդ-գունդ բանակները կրպարփակեն գնացողները, և հրացանի որոտմամբ կաղղարարե նոցա. բայց ա՜լ ուշ էր. հուսահատ և սոսկալի կռիվ դաշոններով, սուրերով և նաճախներով կուրծ առ կուրծ։ Լեռնանման դիակներով կծածկվի դաշտը։ Կրտեսնե Գրգոն ծերունի մը, որ թևքը քաշած, դամասկյան ահեղ խենջարը ի ձեռին իրարու հետև դիակներ կսփռե և անվհատ կառաջանա։ Նորա հետևից կգա յուր որդին սայթելով դիակներուն մեջ և աղաղակելով՝ «Հա՜յր, հա՜յր, քաջազունք այսպես կալանան դիակաց վրայեն։ Նոցանից ոչ ոք կենդանի չի ձերբակալվիր, ոչ ոք կվեն խույս չի տար, այլ ամենքը կընդունին նահատակի պսակ՝ արյամբ ներկված եռապատիկ թշնամիներու հոգիներ իջեցնելով ի թափս դժոխոց»։

22 օգոստոս. Անդոք կպաշարվի։ Գելիցիք, իշխանձորցիք և Սեմալի կեսը կդիմեն 'ի Ֆրոֆրոքար։ Գրգոն իր շենիքցիներով ալիանցոց և մնացած սեմալցոց հետ կամրանա յուր տեղ, կռվելով կատաղորեն ամբողջ 6 օր առանց վառոդի, քարերով և խենջարներով։ Անոթությենեն հոգնած և ուժաթափ մարտիկները կընկնին։ Նոցա կփոխարինեն կանայք կատաղած բորենիներու նման, որոնց ձագերը հափշտակել է ուզում գիշատիչ վագրը։ Անհնար լինելով այլևս կենալ անոթի ու մերկ, Գրգոն կհանձնե Անդոքի պաշտպանությունը կանանց և ինքը մնացյալ քաջերով, բոբիկ, մերկ, անոթի, ուժասպառ, առանց վառոդի, առանց գնդակի կիջնի խուլպ և խիյանք գավառը հաց և պարեն

և ըստ կարենալոյն ռազմամթերք առնելու նպատակավ կանցնի Կեփի, կհասնի Հեղեն:

23 օգոստոս. մշտական հարձակմանց շարունակ դիմանալով՝ սասունցի կանայք բոլորովին ուժաթափ, անկարող ահեղ թշնամուն երկար դիմադրել հետզհետե կքաշվին Կեփի: Անդոք կգրավին. կանայք՝ գրկած մատաղիրան զավակները, կմարտնչին ցիր ու ցան, քարերով և խենջարներով կընկնին վերքերով ծածկված հապշությունն թշնամուն: Քստմնելի տեսարան. բոլոր մնացողները կթրատվին անխնա. մանկանց դիակները կճոճան նիզակներու վրա, կանանց աղիքները՝ սրերու ծայրերին: Հուսահատություն վերին աստիճանի. անկարագրելի քաջություն: Երբ կհասնին ի Կեփի, զիրենք չորս կողմեն շրջապատված կտեսնին ահագին բազմությամբ. փախուստ կամ Գրգոյին միանալ, անհնարին է այլևս:

Քուրդերը կաղաղակեն, որ անձնատուր լինին, ապա թե ոչ...: Սոսկում, իրարանցում, շփոթ, աղաղակ, մանկանց ճիչերը երկինք կթնդացնեին, և Կեփիի ստորոտներեն կճրռան թնդանոթները: Գրգոյի հարսը, Շարե, կուվի մեջ հերոսուհի մը հանդիսացած, կկայնի բարձր քարաժայռի վրա և կխոսի բարձրաձայն. «Սասունցի կանայք, ձեզ կմնա արդ որոշել. կհամարիք գերի գնալ քուրդերուն, ընդունել Մահմեդի բիղծ օրենքը, անպատվել զձեր սրբություն, ի պարսավանս ամբողջ հայության, թե... կհետևիք իմ օրինակին», և հնարաձակ զվարթ միամյա մանկիկն ի թևին կխոյանա բարձր ժայռից ցած, Անդոք անդունին մեջ, քարքարոտ և ապառաժ ուստի մի առվակ բղխելով կթռնա Շենիքի արտեր նորա արյամբ ներկված: Սրա օրինակին կհետևին յուր ընկերուհիք մի առ մի առանց ստորանալու, առանց շփոթվելու, և խեղճ տղայք կհետևին իրենց մայրերու օրինակին՝ անգիտակից իրենց վիճակին: Կտեսնե թշնամին և պակուցմամբ կանգ կառնի, իրարու հետև կթափվին դիակները ճոճելով օդի մեջ անձայն անմրմունջ և խոր անդունդը կծածկվի դիակներով... վերջինները կենդանի կմնան իրենց քույրերու մարմիններու վրա... միայն 50-ի չափ կին ձերբակալելով և մի քանի հարյուր մանկիկներ ներկայանալով փաշայի առաջ, կհրամայվի ընդունել Մահմեդի օրենք. ամենքն սնարգանքով կմերժեն: Խիստ պատիժներով շատ հարցեր կուտա Մուրատի, տալվորիկցոց, Գրգոյի և գելիցոց մասին. սակայն ոչ ոք հանձն կառնե բառ մը ակնարկել բերաններից: Անասելի չարչարանք, երկաթի շիկացած կաթսաներ, ատրաշեկ շշեր և պծգալի ցիցեր... վերջապես այն, ինչ կարող է ստեղծել վայրենի լեռանց գազաթներու վրեժխնդիր կատաղությունը:

24 օգոստոսի. քաջ Գրգոն ի պարտության կմատնվի Հեղինի սարը, ուստի տեսել էր Անդոքի և Կեփիի տեսարանները: Ո՞վ կարող է նկարագրել, թե ինչ անկուսպ կատաղությամբ ճոճելով դատարկ շիշխանները քարերով և նաճախներով, անկարգ և շփոթ ամեն կողմից կհարձակվին թշնամու վրա, արյան ծովերով իրենց պասքյալ շրթունքները, բոցակեզ սրտերը, վրեժխնդիր հոգիները զովացնելու: Միայն երկու վիրահատ փախստականներ զերծանելով կպատմեն այս ամենը: Ալեանց Վարդան խենջարն ի ձեռին կթրատվի մաս առ մաս հարյուրավոր վերքերով ծածկվելեն հետո կընդնի անկենդան և դեռ արյունոտ խենջարը դուրս չի գար նորա ձեռքեն: Կընդնի Իշխանձորի վարդապետը և Փուրխ գյուղի նորընծան, արյան դիակներով ծածկելով յուր հետքերը: Գրգոն վիրահար գետին կընկնի, անոթութենեն ուժասպառ փաշայի առաջ կբանա աչքերը և հաց կուզե, հանկարծ ինքն իրեն գալով կաղաղակե. «Ամոթ քեզ Գրգո դուն ալ օտարին վիզ պիտի ծռես, և խլելով մեկի հրացանը կդիմե... քաշելով փաշայի վրա. կըշողան սուրեր, կըշաչին հրացաններ և նոցա որոտմանց միջից կըլսվի քաջազնի վերջին խոսքը. «Կեցցե Հայաստան»:

Կուվի հետևանքը. Գիլի 360, Շենքը 106, Սեմալ 85, Ալիան 165, Իշխնձոր 78, Աղոքն 66 տներով կայրվին ամբողջովին ու բնակիչները բոլորը բացի մաս մը փախստականներե, սրե կանցնվի: Շատախի, Թերիմի, Խուպի, և Խիանա և Փսոնաց գավառի բնակիչները ըստ պետական արձանագրությանց

14600 (?) հոգի ընդամենը կհեծեն սոսկալի անպատվելի նեղության մեջ։ Բոլոր արտերին քուրդերը տիրանալով, գրավելով տները, անդաստանները, կողոպտելով բոլոր ունեցվածքները, թշվառներու մարմնից խլելով մեկ շապիկն էլ, մերկ և անպաշտպան ցան ու ցիր կթողուն, որ շուռ գան սարերու վրա, վայրի գաղաններու նման, երանի տալով խարույկի վրա բարձրացողներուն, և դիրենք շրջապատող կուռ շղթան չի թողուր, որ փախուստ տան և ազատին իրենց լոկ անձերը։ Նույնիսկ Մշո դաշտի քսան գյուղերը՝ Խրզբլաղաճ, Տատրագոմ, ս. Հովհաննու վանքը, Մառնիկ, Խորոնք և այլն պաշարման մեջ են, այնպես որ չեն համաձայնիլ գնալ դաշտ արտերը քաղելու համար։ Քուրդերն արդեն Տատրագոմ գրված են և մյուսներեն կպահանջեն, որ թող տան իրենց տները, իրենց կալվածքները և տավարները, ելնեն երկրեն, ապա թե ոչ կյանքներնին ի դատ տուժելեն հետո պիտի հանձնեն այդ ամենը։ Կառավարության բողոքները իհարկե անլուելի կմնան. Մառնիկ բազմահարուստ գյուղեն միայն 5000 ոչխար տարվեցան։ Մշո մեջ խիստ ձերբակալություններ։ Նաղիկի երեք հորեղբոր որդիք իրենց հարսներու հետ տաճկացնում [են] Սալի աղի տանը։ Ս. Կարապետի վանքի երկու սարկավագների (Մովսես և Հարություն) և երեք միաբանների բանտարկություն. կարճ խոսքով՝ եթե ժամ առաջ ազդու միջամտություն չինի, ամբողջ 200.000 ոտից ի կոխան պիտի դնան, առանց կարենալու իսկ իրենց արյան բողոքը լսելի անել լուսավորյալ աշխարհին։

Փախստական ուղևորը կպատմե, թե Խեյանի մեջ ռես Հովնանը, տեսնելով 5 փախստական տղայք 10—10 տարեկան, կհանձնե կառավարության, որոնց հրապարակական կգլխատեն Մշո մեջ։ Քանի այդպիսի տեսարաններ անհայտ և անորոշ։

25 օգոստոսի
Խեուս.

Հարգելի բարեկամներ.

Ուղարկում եմ երկրորդ նամակը Խնուսից ստացված։ Եկած մարդիկը պատմում են, որ Սասունի ժողովրդի կեսն անգամ չի ջարդվել, իսկ քրդերից 3—4 անգամ ավելի։ Առայժմ ամենամեծ փողի կարոտություն կա այնտեղ հաց գնելու, որ բոլորովին չկա։ Մարդկանց կարող եք օգնել նրանց միջոցով. շուտով Թիֆլիսում կլինեն։

Վ. Գասպար

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1 Խոսքը վերաբերում է թուրքական բանակի զորահրամանատար Իսմայիլ փաշային։

2 Ռեֆորմների մասին այն հրովարտակներն են, որոնք հրապարակվեցին 1839 և 1856 թթ.։ Դրանցով սուլթանը խոստանում էր բարելավել հպատակ ազգերի և ժողովուրդների վիճակը, որը և հիմնականում մնաց թղթի վրա։

3 Այդպես էր կոչվում 1853—1856 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանի հրապարակած հրովարտակը, որով նա նորից խոստանում էր ենթակա ազգերի ու ժողովուրդների վիճակը բարելավել և նրանց մահմեդականներին համահավասար ճանաչել։

2

1 Հայերի մի մասը ջարդերից ազատվելու նպատակով ստիպված ընդունում էր քրդական վերնախավի ներկայացուցիչներից որևէ մեկի «հովանավորությունը» և դրա դիմաց նրան հարկ վճարում։ Այսպիսով նրանք հարկ էին վճարում և՛ կառավարությանը, և՛ քրդական վերնախավին։

2 Հրացանի տեսակ։

3 Նիզականման փայտ, որի ծայրին ամրացված էր երկկողմանի կացնանման երկաթ։

4 Սասունի գյուղերից մեկը, որի բնակիչները աչքի էին ընկնում քաջությամբ։

5 Հրացանի տեսակ։